

միաբանութիւնը կրեց, խմելու ջուր անգամ չը լինելու աղաքաւ, Էջմիածնի վարչութիւնը նախապատրաստութիւններ է տեսնում մի նոր քանքան հանելու:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ՝

(ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ.)

ԴՊՐՈՅԱԿԱՆՔ.

11 Յուլիսի. Երեւանայ Հայ Հոգ. Դպրանոցի Հոգաբարձութեան անցեալ Գեկտ. 31ին գրած յայտարարութիւնը ի նկատի ունելով, Սինօգր հրամայումէ Կոնսիստորիային, սաստիկ պատուիրել Երեւանայ եկեղեցեաց Երեսփոխաններին, որ նոքա 1876 թուի 19 Նոյեմբ. Հանգ. Վեհափառ Հայրապետի հաճութեամբ որոշուած զրամները 1876 թուից մնացած ապագիկներով վճարեն Հոգաբարձութեանը. ի հակառակ դէպս, կենթարկուին խստագոյն պատասխանատուութեան:

18 Յուլիսի. Թիֆլիզի Առաջնորդ Գեր. Արիստակէս Սրբ. Եպիսկոպոսի տարւոյս Յունիսի 2ին գրած յայտարարութիւնը ի նկատի ունենալով՝ Սինօգր ի տեղի՝ իւր հրաժարականով արձակուած Պ. Գէորգ Բարխուդարեանի, վերահաստատումէ Թիֆլիզի Թեմական Տեսուչ Պ. Ղազարոս Աղայեանին:

29 Յուլիսի. Երեւանայ Փոխանօրդը Յուլիսի 4ին գրած յայտարարութեամբ յայտնումէ թէ, Երեւանայ Ս. Գայիանեան և Սահականուշեան Օրիորդ. Հայ Հոգե. դպրոցաց հոգաբարձութիւնը ըստ առաջարկութեան Հոգաբարձու Պ. Վարդան Եղիազարեանի, ի յարգանս թագադրութեան Կայսերն Ռուսաց Ալէքսանդր Գ.ի որոշել է Ա. իւրաքանչիւր դպրոցում ձրիաբար պահել երկ երկու աղքատ աշակերտուհի, հոգալով նոցա հանգերձները, ուսման վարձը և ուսման բոլոր պարագաները. Բ. Առաջնորդական մայր եկեղեցում ի ներկայութեան երկու դպրոցաց հոգաբարձուաց, ուսուցչաց, աշակերտուհեաց և վարժուհեաց հանդիսաւոր Ս. Պատարագ և գոհացողական մաղթանք կատարել. Գ. թագադրութեան օրը ճրագալոյց անել Դպրոցներում և երեք օր տօն կատարել. Սինօգր հաճ. և հաւան գտնուելով այս որոշման՝ վերահաստատումէ Հոգաբարձութեան որոշումը, և հրամայումէ հրատարակել Արարատ ամսագրի մէջ ի գիտութիւն ընթերցողաց և յօրինակ այլ դպրոցական հաստատութեանց *):

(*) Որքան խմբագրութեան յայտնի է, այդ տեսակ որոշում չատ հայ Դպրոցական հաստատութիւնք են տրեւել: